

## ՉՈՒՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԸՄԲՈՒՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Մ. Ս. ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

Շուկայական հարաբերությունների ձևավորման և հետագա զարգացման փուլերում տնտեսության ցանկացած ոլորտում կարևորագույն դեր ու նշանակություն է ձեռք բերում ձեռնարկատիրական գործունեությունը, նրա կազմակերպման ձևն ու մակարդակը: Փաստորեն, ցանկացած տնտեսավարող սուբյեկտ, անկախ այն հանգամանքից՝ գտնվում է կայացման, զարգացման, հասունացման, թե անկման փուլում, միևնույնն է, զբաղված է ձեռնարկատիրական գործունեության կազմակերպմամբ: այլ կերպ անհնար է ապահովել նրա առջև դրված գործարար նպատակները:

Այս առումով բավականին էական է «ձեռնարկատիրություն» և «ձեռնարկատիրական գործունեության կազմակերպում», նաև դրանց հետ կապված մի շարք այլ հասկացությունների հստակ ըմբռնումը, դրանց սոցիալ-տնտեսական բնույթի բացահայտումը, որն ունի ոչ միայն տեսական, այլև գործնական նշանակություն:

Այս մտտեցումը ենթադրում է, որ ձեռնարկատիրական գործունեությունը արտադրության գործոնների օպտիմալ զուգակցման մի գործընթաց է, որի իրականացման շնորհիվ արդյունք է ապահովվում:

Յ. Շումպետերը նշում է, որ սեփականատիրոջ կարգավիճակը պարտադիր և որոշիչ հատկանիշ չէ ձեռնարկատիրությունում զբաղվելու համար: Նրա կարծիքով ձեռնարկատերը այն գործակալն է, որ յուրաքանչյուր անգամ իրացնում է արտադրության գործոնների ավելի ու ավելի նոր համակցումներ, իսկ ձեռնարկատիրոջ ֆունկցիան (ինովացիայի իրականացումը) դիսկրետ կատեգորիա է և մշտապես ամրագրված չէ: Այդպիսի ֆունկցիան, ըստ Յ. Շումպետերի, կապված է ձեռնարկատիրոջ անձի որոշակի առանձնահատկությունների՝ յուրահատուկ մոտիվացիայի, ինտելեկտի, բարձր կամքի ուժի և զարգացած ինտուիցիայի հետ: Հեղինակը ձեռնարկատիրական ֆունկցիան որպես համարժեք շորրորդ գործոն է ներկայացնում հայտնի երեք՝ կապիտալի, աշխատանքի և հողի տնտեսական գործոնների հետ միասին<sup>1</sup>:

«Էկոնոմիկս» դասագրքի հեղինակներն առանձնացնում են մարդկային տաղանդի հատուկ ձևը՝ ձեռնարկատիրական ունակությունը կամ ձեռներեցությունը, որպես առանձնահատուկ մարդկային ռեսուրս: Ըստ նրաց, ձեռնարկատերը մի անձնավորություն է, որը նախաձեռնում է հողի, կապիտալի ու աշխատանքային ռեսուրսների միավորումը ապրանքների թողարկման և ծառայությունների իրականացման մեկ միասնական գործընթացի մեջ, ինչպես նաև գործարարության վարման ընթացքում ընդունում է հիմնական որոշումները: Բացի այդ, ձեռնարկատերը նորարար է, որը ձգտում է առևտրային հիմքի վրա կազմակերպել նոր արտադրանքի թողարկում, կիրառել նոր բր-

<sup>1</sup> Տե՛ս Ս. Շումպետեր, Теория экономического развития, М., 1982.

տադրական տեխնոլոգիաներ կամ գործարարության կազմակերպման նոր ձևեր. նա ռիսկի գնացող անձնավորություն է<sup>2</sup>:

Մի շարք հեղինակներն ձեռնարկատիրությունը դիտարկում են որպես տրնտեսական ակտիվացման հատուկ ձև, որի միջոցով իրականացվում է շահույթի, եկամտի ձեռքբերման նպատակային գործունեություն, իսկ ձեռնարկատիրական ակտիվության նպատակը այնպիսի ապրանքի թողարկումն ու առաջարկ է, որը կառաջացնի հետաքրքրություն և կապահովի ձեռնարկատիրական շահույթ<sup>3</sup>:

Այլ հեղինակներն ձեռնարկատիրությունը դիտարկում են որպես տնտեսության այնպիսի մի առանձնահատուկ բնագավառ, որը գործում է միայն իրեն հատուկ օրինաչափություններով<sup>4</sup>:

Հաճախ ձեռնարկատիրությունը լուսաբանվում է որպես մի որևէ նոր արտադրանքի թողարկման կազմակերպման գործընթաց, որի շնորհիվ եկամուտ է ապահովվում, և ձեռնարկատերը իր վրա է վերցնում ֆինանսական, սոցիալական և բարոյական պատասխանատվություն<sup>5</sup>:

Գոյություն ունի նաև այն տեսակետը, համաձայն որի «ձեռնարկատիրական ունակությունը» արտադրության գործոնների միավորման, որոշումներ ընդունելու և ռիսկի գնալու ունակությունն է<sup>6</sup>:

Այսպիսով, վերոհիշյալ հեղինակները ձեռնարկատիրությունը ներկայացնում են որպես տնտեսական ակտիվության մի հատուկ ձև, տնտեսության առանձնահատուկ հատված կամ ինովացիոն գործընթաց, ռիսկի գնալու և որոշումներ ընդունելու ունակություն և այլն:

Ձեռաքրքիր է նաև ձեռնարկատիրության՝ որպես ձեռնարկատիրոջ անձին բնորոշ կամ նրան բնութագրող՝ ինտուիցիայի, բարձր ինտելեկտի, կամքի ուժի և այլ հատկանիշների դրսևորում, տեսակետի դիտարկումը:

Ակադեմիկոս Լ. Ի. Աբալկինը նույնպես ձեռնարկատիրությունը դիտում է որպես տնտեսագիտական հատուկ կատեգորիա, որը բնութագրվում է աշխատանքի մեթոդի, ուղղության ընտրության և որոշումների ընդունման ազատության մը, ինչպես նաև՝ իրականացվող որոշումների և դրանց հետևանքների նկատմամբ պատասխանատվության մը, առևտրային հաջողության հասնելու հակվածության մը և այլն<sup>7</sup>:

Ակադեմիկոս Տ. Ի. Զասլավսկայան, որպես ձեռնարկատիրության բնորոշ ձևեր, առանձնացնում է.

ա) շահույթի ստացման նպատակային որոշումը,

բ) տնտեսական որոշումների ընդունման ազատությունը և ինքնավարությունը,

գ) անձնական ռիսկի և պատասխանատվության վրա հիմնված ինքնուրույնությունը<sup>8</sup>:

Կարծում ենք, որ վերոհիշյալ բնորոշումներից յուրաքանչյուրն արտա-

<sup>2</sup> Տե՛ս Բլ Կեմբելլ, Մաքոննել, Լ. Տեյլն Բրյու, Էկոնոմիկա. Մ., Րեսպուբլիկա, 1992, էջ 37—38:

<sup>3</sup> Տե՛ս Ա. Վ. Բուսիգին, Սթրանիմատելսթո: ռաչալնիյ կուրս, Մ., 1992, էջ 7:

<sup>4</sup> Տե՛ս Յու. Իվանով, Փ. Րուսնով, Րնոկ, սթրանիմատելսթո, կադրյ, Մ., 1992, էջ 82:

<sup>5</sup> Տե՛ս Զ. Կոթլյար, Սթրանիմատելսթոյի կլիմատ վ Րոսսիյ, «Դելովոյ միր», 30 յանվարյ 1993.

<sup>6</sup> Տե՛ս «Օսնովյ սթրանիմատելսթոյի դեյատելնոսթ», «Փինանսյ և սթատիսթիկա», Մ., 1995, էջ 5:

<sup>7</sup> Տե՛ս Լ. Ի. Աբալկին, Զադեյկա Օ Րոսսիյսկոյ սթրանիմատելսթո, Մ., 1992, էջ 12:

<sup>8</sup> Տե՛ս Թ. Ի. Զասլավսկայա, Բիզնես-սլոյ Րոսսիյսկոյ օբսթևո: սուսթոսթ, սթրուկտուրա, սթատուս, «Սոցիոլոգիչեսկե ռեսևոզաւաւյա», Մ., 1995, № 3, էջ 3:

հայտում է «ձեռնարկատիրություն» հասկացությանը հատուկ հատկանիշներ, բնութագրիչներ, սակայն գտնում ենք, որ «ձեռնարկատիրությունը» համալիր և դինամիկ մի հասկացություն է, որի բնորոշման համակողմանիության և լիարժեքության ապահովման համար պետք է ցուցաբերել փուլային և նպատակային-ամբողջական մոտեցում:

Նախ՝ պետք է հստակ ամրագրել, որ ձեռնարկատիրության իրականացումը ինչպես մակրո, այնպես էլ միկրոմակարդակներում, հիմնվում է որոշակի շահերի վրա, այսինքն՝ ձեռնարկատիրական գործունեության իրականացումը ձեռնտու է և պետությանը, և հասարակությանը, որոշ վերապահումներով՝ նաև բոլոր ձեռնարկատերերին:

Պետությանը ձեռնտու է պետական բյուջեն հարկային մուտքերով ավելի շատ ապահովելու, հասարակությանը՝ սպառողներին ավելի բարձրորակ և ավելի մեծ ծավալի ապրանքներ և ծառայություններ առաջարկելու տեսանկյունից: Ի դեպ, ըստ սպառողների, որքան բարձր է մրցակցության աստիճանը, այնքան գները ցածր են, կամ արտադրանքի որակը բարձր է: Ուստի, ձեռնարկատիրությունը ապահովում և իր մեջ ներառում է նաև մրցակցության ապահովման ֆունկցիան: Եվ վերջապես, բոլոր ձեռնարկատերերի տեսանկյունից ակտիվ ձեռնարկատիրության իրականացումը ձևավորում է խիստ և դինամիկ մրցակցային դաշտ, որտեղ գոյատևելը ավելի ու ավելի դժվար է: Սակայն եթե տվյալ հասարակության մեջ գործում են արդար և միասնական, բոլորի կողմից պահպանվող «խաղի կանոններ», ապա ձեռնարկատիրությունն ունի նաև ջանքերի հավաքագրման և նպատակաուղղման ֆունկցիա:

Այս տեսանկյունից ձեռնարկատիրությունը և դրա իրականացման գործընթացը օրենքով պետք է պաշտպանված լինի, և ինքն էլ իր իրացման փուլում հարգի օրենքը, այսինքն՝ առկա է նաև իրավական ֆունկցիան:

Ձեռնարկատիրության իրականացմամբ մեծանում է ազգային հարստությունը, ձևավորվում և գործում են նոր ձեռնարկություններ, բարձրանում է բնակչության կենսամակարդակը, արագորեն իրացվում են ձեռնարկատիրոջ սոցիալական, հոգեբանական պահանջմունքները, զարգանում է սեփականատիրության ֆունկցիան:

Ձեռնարկատերը, իրականացնելով ձեռնարկատիրական գործունեություն, միաժամանակ սեփական գործունեությամբ նպաստում է բազմաթիվ կառույցների, ձեռնարկությունների, անհատ մարդկանց շահերի իրացմանը (սահմանափակելով միայն իր մրցակիցների շահերը):

Այսպիսով, նա գործունեությամբ խտացնում է մի շարք ֆունկցիաներ՝ սոցիալական, տնտեսական, իրավական, հոգեբանական, մրցակցային, սեփականատիրական: Դրանով իսկ այն ունի նաև կարգավորիչ ֆունկցիա: Ուրեմն, ձեռնարկատիրությունը համալիր և ամբողջական հասկացություն է: Այն իրագործելով սեփականության ֆունկցիա՝ միաժամանակ միջոց է նաև նախկին ժամանակահատվածում նրա ծննդի համար, այսինքն՝ ունի նաև վերաբաղադրողական ֆունկցիա: Այն նաև սեփականության ստեղծման, ավելացման միջոց է: Քանի որ մշտապես որոշ մարդկանց մոտ սեփականությունը ավելանում է, իսկ այլոց մոտ՝ քչանում, հետևաբար այն ունի նաև հավասարակշռող-հետևանքային ֆունկցիա, որով ամրագրում է ձեռնարկատիրոջ հաջողությունը կամ անհաջողությունը:

Ըստ այդմ կարևորվում է ձեռնարկատիրության և սեփականության համատեղելիության կամ անբաժանելիության (ամբողջականության) մասին հարցադրումը: Կարծում ենք, որ օպտիմալ տարբերակը այն է, երբ ձեռնարկատերը (որն օժտված է ձեռնարկատիրական ունակություններով) ձեռնարկատիրական գործունեություն է ծավալում իր սեփականության շրջանակներում, որի ար-

գյուներում անընդհատ տեղի է ունենում սեփականության իր մասի ավելացում (հնարավոր է և նվազում)՝ արժեթղթերի, անշարժ գույքի, ֆինանսական միջոցների, այլ ձեռնարկությունների և այլ տեսքով: Ներկայումս, երբ ՀՀ-ում շուկայական հարաբերությունները դեռևս գտնվում են ձևավորման փուլում, ձեռնարկատիրությունն առանց սեփականության կարծես դիտարկվում է որպես կառավարչական մի գործընթաց: Գործնականում, ասենք, սեփականատերը այլ անձնավորություն է, իսկ օբյեկտ աշխատեցնողը մենեջերն է, գործադիր տնօրենը, որը կամ աշխատավարձ է ստանում, կամ որոշակի շահույթ՝ կախված ձեռնարկատիրական գործունեության արդյունքներից:

Այսպիսով, կայացած շուկայական ավանդույթներ ունեցող պետություններում ձեռնարկատիրական ունակություններով օժտված անձնավորությունները հանդես են գալիս որպես հատուկ մասնագետներ, որոնք բարձր վարձատրություն ունեն: Սակայն, ներդնելով իր ձեռնարկատիրական ունակությունները, ձեռնարկատեր-մասնագետը միշտ էլ ձգտում է դառնալ ձեռնարկատեր-սեփականատեր, այսինքն՝ ձգտում է ունենալ լիարժեք անկախություն, և սեփական ռիսկի դիմելու համար միայն պատասխանատու է ինքը:

Այսպիսով, սեփականության հատուկ և համընդհանուր ձևերի համադրման ճանապարհով կարելի է ստանալ (ձեռք բերել) ձեռնարկատիրական շահույթ:

Սակայն, մենք հակված չենք կարծելու, որ ձեռնարկատիրական գործունեության իրականացման արդյունքում կարելի է գրավել շուկայի այս կամ այն հատվածը, պահովել ծրագրավորված շահույթի ծավալը, այսինքն՝ ունենալ մշտական հաջողություն: Քանի որ գոյություն ունի ռիսկի գործոնը, ուստի, կախված տարբեր գործոնների ազդեցությունից, որոշ դեպքերում հրեշտարավոր է հասնել հաջողության, այլ դեպքերում՝ ոչ (ոչ պատշաճ բիզնես-ծրագրի մշակում, շուկայական կունյունկտուրայի կտրուկ փոփոխություն, մրցակիցների հետ անհաջող պայքար, հակազուգազդ և այլն):

Այսպիսով, ձեռնարկատիրության իրականացումը իր գոյության շուկայական դաշտում կախված է բազմաթիվ գործոնների ազդեցությունից և դրանց նկատմամբ ձեռնարկատիրական ունակությունների ու որոշումների փոխադարձ դիմակայումից:

Մեր կարծիքով, ձեռնարկատիրությունը դա մի համալիր-ամբողջական տնտեսագիտական կատեգորիա է, որտեղ միկրո-մակրոմակարդակներում կենտրոնացված են պետության, հասարակության, սեփականատիրական, սոցիալական և այլ շահեր, որոնք իրացվում են կոնկրետ ձեռնարկատիրական ունակություններ ունեցող անձի՝ ձեռնարկատիրոջ ունակությունների ու արտադրության մյուս գործոնների այնպիսի միավորման դեպքում, որի արդյունքում ապահովվում է ձեռնարկատիրական շահույթ (եկամուտ, շուկայի հատվածի գրավում, մրցակիցների դուրսմղում և այլն): Միաժամանակ ձեռնարկատիրությունը պարունակում է վերարտադրողական, սոցիալական, հոգեբանական, իրավական, մրցակցային, կարգավորիչ, սեփականատիրական և այլ ֆունկցիաներ, որոնք ապահովում են ձեռնարկատիրության իրականացման բուն հնարավորությունները: Այսպես մրցակցող դաշտը հակասության մեջ կմտնի ձեռնարկատիրության հետ և դուրս կմղի նրան: Ուրեմն, վերոհիշյալ ֆունկցիաները պարտադիր ներառված են ձեռնարկատիրության կառուցվածքում, ըստ որում, տարբեր ժամանակահատվածներում մեծանում կամ նվազում է այս կամ այն ֆունկցիայի դերը: Նշենք նաև, որ սեփականատիրության և ձեռնարկատիրության մեկ անձի մեջ զուգակցումը ապահովում է օպտիմալ արդյունք:

Ձեռնարկատիրությունը նաև ստեղծագործական, նախաձեռնողական, մշտապես զարգացող, ճկուն ու դինամիկ գործունեություն է, որը պահանջում է ոչ ավանդական և ոչ պահպանողական մոտեցում, երբ անհրաժեշտ է ամենասեղմ ժամկետներում, հիմնվելով սեփական պատասխանատվության վրա, ընդունել ճիշտ որոշումներ: Դրա համար անհրաժեշտ է ունենալ ամենժամյա լրատվություն շուկայական, հասարակական և քաղաքական ոլորտներում տեղի ունեցող իրադարձությունների մասին, իրականացնել համապատասխան վերլուծական և կանխատեսման աշխատանքներ:

Եթե ձեռնարկատերը ուշացնի որևէ գործարքի վերաբերյալ որոշման ընդունումը կամ ձգձգի եկամտի կապիտալացումը, ապա նա չի դիմանա մրցակցությունը:

Այսպիսով, ձեռնարկատիրությունը ամենօրյա, քրտնաջան, հագեցած, պահանջկոտ և նպատակային աշխատանքի արդյունք է:

ՀՀ-ում բուն սեփականատերը հաճախ վարձում է օբյեկտը կառավարող տնօրեն և շատ քիչ է հետաքրքրվում օբյեկտի ընթացիկ գործունեության կատարելագործման խնդիրներով: Արդյունքը լինում է այն, որ նման ձեռնարկությունը որոշ ժամանակ անց դուրս է մղվում մրցակիցների կողմից կամ, այլևս չբավարարելով շուկայի արդիական պահանջներին, մատնվում է անհաջողության: Այստեղից հետևում է, որ ձեռնարկատիրությունը պահանջում է սեփական գործունեության ամենօրյա կատարելագործում:

Գործնականում տարբերակվում են «ձեռնարկատեր» և «ձեռներեց» հասկացությունները:

Մի խումբ հեղինակներ ձեռներեցության բնորոշ հատկանիշներ են համարում ոչ ստանդարտությունը և ինքնուրույնությունը, նպատակին հասնելու համար նորարարությունը և նորույթը, գործնականությունը, խիզախությունն ու համարձակությունը, ռեսուրսների ռացիոնալ և արդյունավետ օգտագործումը:

Մեր կարծիքով ձեռներեցությունը անձի այն ունակություններն են, որոնք գոյություն ունեն նաև առանց ձեռնարկատիրական գործունեության իրականացման (հնարավոր վիճակում), որոնք իրացման դեպքում կարող են միահյուսվել ձեռնարկատիրության հետ: Այլ կերպ ասած, ձեռներեցությունը կարելի է համարել սպառողական արժեք (օգտակարությունը), իսկ ձեռնարկատիրությունը՝ արժեք (փոխանակային արժեքը): Ուստի, ձեռնարկատիրությունը միշտ կարելի է դուրս բերել շուկա, որտեղ այն միշտ գնահատվում է, մինչդեռ ձեռներեցությունը ապրանքային տեսք չունի, այլ հանդես է գալիս որպես հնարավորություն:

Ի դեպ, մեր հանրապետությունում ձեռներեց մարդկանց թիվը բավականին մեծ է: Մեր կարծիքով, հայ ժողովուրդը թերևս պատմականորեն օժտված է այդ ջիղով: Ուղղակի այն պետք է իր հաջող իրացումը գտնի նպաստավոր պայմաններում:

Հետագայում կտեսնենք, որ դա նույնպես ձեռնարկատիրության զարգացման և ակտիվ ներդրումային քաղաքականության իրականացման անհրաժեշտ բաղադրիչներից մեկն է:

Որոշ հեղինակների կարծիքով ցանկացած երկրի բնակչության միայն 6 %-ն է տիրապետում ձեռնարկատիրական ունակությունների և միաժամա-

<sup>9</sup> Տե՛ս Գ. Վ. Горланов, В. В. Карлов, В. Т. Рязанов, Социалистическая предпринимчивость, М., 1988, էջ 6:

նակ պատրաստ սկսելու սեփական գործը<sup>10</sup>, կարծում ենք, ՀՀ-ում այդ ցուցանիշն անհամեմատ ավելի բարձր է:

Տնտեսագիտական գրականության մեջ առանձնացվում են նաև «ձեռնարկատեր» և «մենեջեր-կառավարիչ» հասկացությունները: Մասնավորապես, մենեջերները տարբերվում են ձեռնարկատերերից այն բանով, որ կառավարում են օտար կապիտալներ, որոշումներ են ընդունում ավելի սահմանափակ դաշտում, ազատ չեն տվյալ ձեռնարկության կազմակերպական-տրեստեսական կառուցվածքի փոփոխություններ կատարելու գործում: Սակայն, ակադեմիկոս Տ. Ի. Զասլավսկայայի կարծիքով, միայն բավականին անկայուն շուկայական տնտեսության պայմաններում է մենեջերների գործունեությունը ընդունում այլ բնույթ, այսինքն՝ ընդհուպ մոտենում ձեռնարկատիրությունը<sup>11</sup>:

Համաձայն լինելով ակադեմիկոսի կարծիքին՝ նշենք, որ ծայրահեղ անկայուն վիճակում բախտորոշ կամ ճակատագրական որոշումներ է ընդունում և պատասխանատվություն կրում ոչ թե սեփականատերը, որը ընթացիկ օպերատիվ իրավիճակին լավ ծանոթ չէ կամ ընդհանրապես ծանոթ չէ, այլ մենեջերը: Դրանով իսկ նա նմանվում է ձեռնարկատիրոջ:

Ձեռնարկատիրոջ համար կարևոր է նաև ռիսկի և նորարարության հետ կապված խնդիրների հաջող լուծումը: Նորարարությունը նախ և առաջ ձեռնարկատիրոջ կողմից ոչ ստանդարտ լուծումների և որոշումների ընդունումն է, դժվար իրավիճակներից դուրս գալու ուղիներ գտնելը: Մինչդեռ ռիսկայնությունը անորոշ պայմաններում ձեռնարկատիրոջ կողմից անհրաժեշտ և հույս ներշնչող որոշակի գործողությունների իրականացումն է: Ասենք նաև, որ ռիսկի դիմելու հետևանքով, անգամ իսկ հաջողության դեպքում, այնուամենայնիվ, տեղի է ունենում նյութական, ֆինանսական, բարոյական և այլ կարգի որոշակի արժեքների կորուստ: Հետևաբար, եթե ընդհանրապես հնարավոր չէ խուսափել նման կորուստներից, ապա կարևոր խնդիր է դրանք հասցնել նվազագույնի:

Ինչ վերաբերում է «ձեռնարկատիրություն» և «գործարարություն (բիզնես)» հասկացությունների տարբերակմանը, ապա այս հոդվածում նպատակ չունենալով մանրամասն անդրադառնալու այդ հարցին, նշենք միայն, որ գործարարությունը ինչ-որ իմաստով արտահայտում է ձեռնարկատիրության իրականացման բազմափուլ գործընթացի միայն մեկ փուլը, այն է՝ ամեն գրեթե շահույթ ստանալ:

Ամենևին չնսեմացնելով գործարարության գործնական նշանակությունը՝ նշենք, որ այն տեսականորեն ներառված է ավելի լայն և համալիր բնույթ ունեցող «ձեռնարկատիրություն» հասկացության մեջ և, որպես վերջինիս կարևոր հատկանիշներից մեկը, հանդես է գալիս որպես նրա իրականացման միջոց և ըստ էության համարժեք է «գործ» հասկացությանը:

Վերջապես, քննարկելով ձեռնարկատիրության հետ կապված տեսական խնդիրները, շենք կարող շնչել այն պայմանների մասին, որոնցում իրականացվում է ձեռնարկատիրական գործունեությունը: Դրանցից առավել կարևորներն են՝

ա) տվյալ երկրում շուկայական հարաբերությունների զարգացման աստիճանը,

բ) շուկայական, տնտեսական և քաղաքական կոնյունկտուրայի վիճակը,

<sup>10</sup> Տե՛ս А. Блинов, Малое предпринимательство, М., 1997, էջ 18:

<sup>11</sup> Տե՛ս Т. И. Заславская, նշվ. աշխ., էջ 3:

գ) մրցակցային դաշտում խաղի կանոնների արդարության և ազատության աստիճանը:

Ի վերջո, չպետք է մոռանալ նաև, որ ձեռնարկատիրական գործունեության ակտիվությունը կախված է ինչպես տվյալ պետության կողմից իրականացվող սոցիալ-տնտեսական քաղաքականության բնույթից, այնպես էլ թելադրվող «խաղի կանոնների» քաղաքակիրթ շինելու աստիճանից:

Կարծում ենք, որ ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու հնարավորություններ պետք է ունենան բոլորը, ովքեր իսկապես ունեն ցանկություն, ըստ որում, տվյալ հասարակության զարգացման մակարդակը կարելի է բնորոշել՝ դրա համար ավելի մեծ հնարավորությունների ընձեռմամբ:

Եվ որպես այդպիսի հնարավորությունների օգտագործման զանգվածային ուղորտ՝ հանդես է գալիս փոփոք և միջին ձեռնարկատիրությունը:

Ուստի, այն երկրերը, որը փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման և աջակցման համար իրականացնում է պետական նպատակային քաղաքականություն, գործարարության բնագավառում կունենա հաջողություն: Այդ դեպքում է, որ խոշոր և զանգվածային ընտրանքից ապագայում ի հայտ են գալիս խոշոր ձեռնարկատերերը՝ ապահովելով սեփական երկրին և մրցակցին բարգավաճում:

**М. С. МЕЛКУМЯН — Вокруг определения понятия «предпринимательство».**—В статье изложены и проанализированы подходы и мнения разных ученых-экономистов, социологов и психологов относительно сущности понятий «предприниматель» и «предприимчивость», «бизнесмен» и т. д. Представлен собственный вариант определения понятия «предпринимательство», а также значение и роль предпринимательства, раскрываются регулирующая, воспроизводящая, психологическая, социальная, экономическая и др. его функции.

Предпринимательство — комплексное социально-экономическое и общественно-психологическое понятие. По мнению автора, от четкого и ясного понимания этого явления зависит формирование эффективной законодательной базы, а также становление и дальнейшее развитие предпринимательства и бизнеса в РА.